ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 դեկտեմբերի 2008 թվականի N 1478-Ա

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ՔԵՆԴԼ» 3 ԳԷՎ ԷՆԵՐԳԻԱՅՈՎ 3-ՐԴ ՍԵՐՆԴԻ ՍԻՆՔՐՈՏՐՈՆԱՅԻՆ ԼՈՒՅՍԻ ԱՂԲՅՈՒՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև Հայաստանում առաջատար կիրառական գիտական հետազոտությունների երկարաժամկետ զարգացումն ապահովելու և տնտեսության գիտատար ուղղությունների համար անհրաժեշտ փորձարարական բազա ստեղծելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. «Քենդլ» սինքրոտրոնային լույսի աղբյուրի նախագծի հիման վրա ստեղծվող միջազգային կենտրոնին տալ գիտության և առաջատար տեխնոլոգիաների բնագավառում ռազմավարական ազգային գերակայության կարգավիճակ:

2. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին՝ «Քենդլ» կենտրոնի ղեկավարության հետ համատեղ պատրաստել նոր կենտրոնի ստեղծման համար հողատարածքի տրամադրման վերաբերյալ առաջարկ:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ օտարերկրյա կազմակերպությունների կողմից ներկայացված ֆինանսական առաջարկությունների հիման վրա պատրաստել նախագծի իրականացմանը Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական մասնակցության վերաբերյալ առաջարկ:

4. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահին՝ ներկայացնել առաջարկներ «Քենդլ» նախագիծը Եվրախորհրդի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ռուսաստանի Դաշնության և այլ շահագրգիռ երկրների ու կազմակերպությունների հետ համագործակցության միջազգային գիտական ծրագրերում ներառելու վերաբերյալ:

5. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի հետ համատեղ պատրաստել ապագա կենտրոնի կառուցվածքի և կազմակերպական կարգավիճակի վերաբերյալ առաջարկ:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2008 թ. դեկտեմբերի 18
Երևան

PDF created with pdfFactory trial version www.pdffactory.com